

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ, ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ն. Յ. ԴԻԼԲԱՐՅԱՆ

Մարդկային հանրությունը չի կարող գոյություն ունենալ և զարգանալ առանց շրջակա աշխարհի տարրերի անվանման: Անուններ տրվում են այն ամենին, ինչ նշանակալի է հասարակության համար՝ սկսյալ փողոցից, մարզագետնից, ձորից մինչև մայրցամաքներն ու օվկիանոսները: Տեղանունների հիմնական նշանակությունն է՝ օգնել մարդկանց կողմնորոշվել աշխարհում և ապահովել օբյեկտների նույնականացման հնարավորությունը և տարբեր մակարդակներում հաղորդակցումը: Տեղանունները կարող են առաջանալ երկու եղանակով՝ և՛ տարերային, ենթագիտակցական մակարդակի ազդակներով, և՛ նպատակային, գիտակցության կողմից հստակ կառավարվող սկզբունքներով ու ավանդույթներով, սակայն դրանց առաջացման նպատակային կամ տարերային լինելը բնավ չի ազդում հանրության կյանքում իրենց ունեցած դերի և կարևորության վրա<sup>1</sup>: Թվում է, թե մի անգամ ստեղծվելով էթնիկապես միասեռ և սոցիալապես բավական կայուն հասարակության մեջ՝ տեղանունները կարող են իրենց սկզբնաձևով գործառել առանց ժամանակային սահմանափակման, քանի որ հաջողությամբ են իրականացնում իրենց նշանային գործառույթը: Սակայն տեղանունները հաճախ իրենց ծննդյան պահից իսկ ստանում են տարբերակային ձևեր, փոփոխության է ենթարկվում նրանց հնչյունական պատկերը՝ հնչյունների հավելում, անկում, ամփոփում և այլն: Ժողովրդագրական տեղաշարժերը, հասարակական-պետական կարգերի փոփոխություններն անմիջապես ազդում են տեղանունների վրա՝ առաջացնելով աշխարհագրական օբյեկտի անվանման զուգաձևություններ, հոմանշային տարբերակներ: Տեղանունների տարբերակային ձևերի առաջացման հիմքում ընկած են և՛ լեզվական, և՛ արտալեզվական գործոններ:

Նույն տարածքում տարբեր էթնիկական միավորների հայտնվելը, ապա նաև պարտադրված կամ կամավոր համակեցությունն անխուսափելիորեն հանգեցնում են բնիկ, նախնական տեղանունների փոփոխության: Քանի որ Պատմական Հայաստանի տարածքը տարբեր ժամանակներում պարբերաբար հայտնվել է նվաճող այլալեզու, այլադավան ցեղերի և ազգերի ազդեցության ներքո, հայկական տեղանուններն այս տեսանկյունից ուսումնասիրության հարուստ նյութ են ընձեռում: Մեր տեղանունների տարբերակները կրում են և՛ հնդեվրոպական, և՛ սեմական, և՛ կովկասյան, և՛ թուրք-թաթարական լեզուների, լեզվամտածողության դրոշմը: Այդ ազդեցություն-

<sup>1</sup> St'u И. П. Литвин, О некоторых особенностях функционирования топонимов в обществе // Топонимия и общество, М., 1989, էջ 3-5:

դրոշմը կարող է արտահայտվել նախ՝ հնչյունական աղավաղումների ձևով. նվաճողների լեզուները բնականաբար ունենում են հնչյունական չհամընկնող համակարգեր՝ *Կարս - Ղարս, Կումայրի - Գյումրի, Գավառ - Զյավառ, Կասպան - Ղափան, Սահման - Սաղման - Սաղան, Բերդազարակ - Փերթեքրեկ, Արտանուշ - Էրդենուշ, Բարեձոր - Բալասոր, Հանգրվան - Հանկրմառ, Տավրոս - Դովրոս....*, ապա՝ հանգել տեղանունը կազմող արմատների փոփոխության, որի տարածված դրսևորումներից մեկը լիակատար կամ մասնակի քարգմանական պատճենումն է՝ *Գետաշեն - Չայքենդ, Առյուծաշեն - Ասլանաբադ, Օժուտ - Իլանլու, Իջևան - Բարվանսարա, Հանքավան - Միսխանա, Նորաշենիկ - Թազաքենդ, Կաքավաձոր - Կուրոպատկինո, Հովվաշեն - Չոբանքերահնեզ, Կարմիր - Կրասնի...*, մյուսը՝ լիակատար անվանափոխությունը, վերջինիս հիմքում բնիկ ազգի հետքերի իսպառ ջնջումն է, նրա կենսատարածքի յուրացմամբ՝ *Արցախ - Ղարաբադ, Վարարակն - Խանքենդի - Ստեփանակերտ, Շակաշեն - Խանլար, Հավթախաղաց - Սաղասղան Ղալասի, Կարին - Արզրում, Գյումրի - Ալեքսանդրապոլ - Լենինական, Սևան - Ելենովկա, Պորտակ - Օրդակլու...*

Ժամանակակից հասարակությունն իր գիտելիքների, քաղաքակրթական մակարդակի թելադրանքով ձգտում է բոլոր ոլորտներում տերմինաբանության, այսինքն՝ անվանումների միօրինակեցման, միաձևության, այդ թվում նաև աշխարհագրական անունների: Անունն իր նշանային գործառույթը լիարժեք իրականացնելու համար պետք է լինի եզակի և կայուն: Անվանումների ձևերի միօրինակեցման և կանոնակարգման խնդիրն այսօր պետականորեն իրականացվում է աշխարհի շատ երկրներում՝ պայմանավորված տիրող գաղափարաբանությամբ և հասարակական զարգացման մակարդակով: Սակայն տեղանունները, ներկայացնելով վարչական բառապաշարը, ամենից առաջ զուտ լեզվական միավորներ են, հետևաբար գործառույթ և զարգանում են լեզվական օրենքների համաձայն: Դա վերաբերում է և՛ օտարալեզու, փոխառյալ տեղանուններին, և՛ տվյալ լեզվի համար բնիկ կազմություններին: Ինչպես ցանկացած բառ, տեղանունը ենթակա է որոշակի քերականական փոփոխությունների, ինչպես յուրաքանչյուր անուն, նա կարող է կոնկրետ բովանդակության հետ մեկտեղ արտահայտել հավելյալ իմաստներ՝ պայմանավորված իր կողմից անվանվող օբյեկտի հանդեպ խոսողի իրադրային վերաբերմունքով<sup>2</sup>:

Համակարգել և դասակարգել անվանումների տարբերակայնության և օբյեկտների բազմանունության բոլոր դեպքերը, այսինքն՝ լիովին բացահայտել հասարակության մեջ, կենդանի խոսքում տեղանունների կյանքի մանրամասները, բավականաչափ դժվար և ծավալուն հարց է, ուստի ներկա հոդվածում անդրադառնանք դրանց որոշ մասին՝ արձանագրելով տեղանվանական մի շարք ընդհանրություններ:

Վերլուծության տեսանկյունից ամենադյուրինը և առավել հաճախադեպը նպատակասլաց վերանվանման դեպքերն են, որոնց հիմքում քաղաքական-գաղափարաբանական արժեհամակարգերի փոփոխություններն են<sup>3</sup>: Այս երևույթն առկա է բոլոր լեզուներում՝ *Կումայրի - Գյումրի -*

<sup>2</sup> Տե՛ս **Н. Д. Арутюнова**, *Аспекты семантических исследований*, М., 1980, էջ 157-161:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 7-10:

*Ալեքսանդրապոլ - Լենինական - Գյումրի, Ղարաքիլիսա - Կիրովական - Վանաձոր, Ելենովկա - Սևան, Միխայլովկա - Կրասնոսելսկ - Կարմիր գյուղ, Դարաչիչակ - Ծաղկաձոր, Միսխանա - Միխայլովկա - Հանքավան, Զալալօղլի - Ստեփանավան, Սովետակերտ - Կզըլբուլաղ - Խաչաղբյուր, Խանքենդի-Ստեփանակերտ, Գանձակ - Ելիզավետպոլ - Կիրովաբադ - Գյանջա, Յարիցին-Ստալինգրադ - Վոլգոգրադ (ՌԴ), Բոգդանովկա - Նինոցմինդա (ՎՀ), Լենինաբադ - Խուջենդ (Տաջիկստան), Վարնա - Ստալին - Վարնա (Բուլղարիա), Քանավերի հրվանդան - Քեննեդու հրվանդան - Քանավերի հրվանդան (ԱՄՆ), Սանտո Դոմինգո - Սյուդադ Տրուխիլիո - Սանտո Դոմինգո (Դոմինիկյան Հանրապետություն) ... Առավել կամ նվազ չափով այսպիսի վերանվանումներ կատարվել և կատարվում են գրեթե բոլոր պետություններում՝ թե՛ անցյալում, թե՛ ներկայում:*

Հին, պաշտոնապես փոփոխված անվանումը շարունակում է ապրել ոչ պաշտոնական խոսքում, հասարակությունը հաճախ պատրաստ չէ գործածելու նոր տեղանունը և ավանդույթի ուժով շարունակում է կիրառել հին տարբերակը: Հիշենք Երևանի *Ամիրյան փողոցի* փոփոխված ձևի՝ *Վռամ-Հապուհի փողոց*, ճակատագիրը, որն այդպես էլ չամրակայվեց, և, ի վերջո, պաշտոնապես վերադարձանք «հին ու բարի» տարբերակին. ազգային պատմական հերոս, հայոց գրերի գյուտի ջատագով լուսավորյալ թագավորն իր տեղը զիջեց գահընկեց եղած գաղափարաբանության՝ համայնավարության կարմիր հերոսին: Նման պաշտոնական վերադարձ հին ձևերին ոչ միշտ է կատարվում, բայց մենք ակնհայտ վկան ենք խոսքային մակարդակում հին ձևերի գերակայության երևանյան շատ այլ փողոցների ու հրապարակների, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ բնակավայրերի նոր անունների պարագայում, այսինքն՝ և՛ մանրատեղանունների, և՛ բուն տեղանունների պարագայում՝ *Լենինի հրապարակ - Հանրապետության հրապարակ, Ֆուրմանովի փողոց - Մամիկոնյանց, Չերյոմուշկա - Աջափնյակ, Լենինական - Գյումրի, Կիրովական - Վանաձոր, Դուկասյան - Աշոցք, Կալինինո - Տաշիր, Լաչին - Քաշաթաղ, Քելրաջար - Քարվաճառ...* Այս իրողության պատճառը այդ տեղանունները կրող հասարակության ոչ այնքան գաղափարական հակվածությունն է, որքան սովորույթի ուժը, որը նաև օբյեկտի ճանաչելիության, հանրահայտության բարձր աստիճան է ապահովում: Նոր անունները՝ իբրև նշան, բնականաբար դեռևս թերի են կատարում իրենց գործառույթը, որովհետև ամրակայված չեն հանրային գիտակցության մեջ, դրա համար ժամանակ և կամք է պահանջվում:

Հասարակությունը, սակայն, երբեմն հետևողականորեն մերժում է նոր կամ հարաբերականորեն նոր անվանումները՝ կառչելով հներից, ինչը ցույց է տալիս, որ մարդիկ անտարբեր չեն այն վայրերի հանդեպ, ուր ապրում են, արժեհամակարգերի տեղաշարժերն էլ ոչ միշտ են ողջունում. պահպանողականությունը, ինչպես նաև կարոտախտը լեզվական կարգեր չեն, բայց դրանք լուրջ գործոն են տեղանունների կայունության ապահովման տեսանկյունից: Պետական հրամանագրերով, որքան էլ վեհ նպատակներով դրանք թելադրված լինեն, չափազանց դժվար է հանրությանը պարտադրել որևէ նոր տեղանուն:

Այսպիսով, անվանումների հանդեպ հանրության վերաբերմունքի մեջ գերակայում և հավերժ մրցակցության մեջ են լեզվական տնտեսման ան-

կիրք սկզբունքը և օբյեկտի ու նրա անվան հանդեպ խոսողների աչառու, գագսմունքային մոտեցումը: Լեզվական տնտեսման սկզբունքը պահանջում է կրճատել անվանումները, վերացնել տարբերակները, հոմանշությունը, իսկ հուզական մոտեցումը թելադրում է հաճախ ուղիղ հակառակը՝ կարճ ձևերի փոխարեն հին ու սիրելի երկարաշունչ անվանումներ, փաղաքշական զուգաձևություններ և այլն<sup>4</sup>:

Լեզվի և խոսքի մեջ անվանումների բազմաձևության, տարբերակայնության ամենատարածված և բնորոշ դեպքը նույն օբյեկտի պաշտոնական, լիակատար և ոչ պաշտոնական, հանրակիրառելի, երբեմն կրճատված ձևերի մրցակցությունն է: Որոշ երկրներում այս երևույթն ավելի տարածված է, որոշ երկրներում սակավադեպ, սակայն այն առկա է գրեթե ամենուր, ինչը թույլ է տալիս արձանագրել այն իբրև տեղանվանական ունիվերսալիա՝ ընդհանրույթ: Նկատի ունենք այնպիսի զուգաձևությունները, ինչպիսիք են՝ *Թբիլիսի - Թիֆլիս, Գյումրի - Լենինական, Կապան - Ղափան, Վանաձոր - Կիրովական, Գավառ - Զյալառ, Հրազդան - Ախտա, Հարավ-արևմտյան թաղամաս - Բանգլադեշ, Մաշտոցի պողոտա - Պրուպեկտ, Նորքի զանգված - Մասիվ, 15,16,17 թաղամասեր - Կվարտալ, Չերյոմուշկա - Աջափնյակ, Օպերայի հրապարակ - Ազատության հրապարակ...* Հիշատակված բոլոր դեպքերում տեղանվան այս կամ այն տարբերակի կիրառությունը պայմանավորված է հրապարակման կամ խոսքային կիրառության պաշտոնականության մակարդակով: Պարզ է, որ լիակատար, գրական ձևերը գործառույց են պաշտոնական փաստաթղթերում ու ոճերում, իսկ երկրորդները՝ ժողովրդախոսակցական, գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում:

Տարբեր լեզուներում բավականին տարածված է ածական որոշյից կամ սեռական հոլովով հատկացուցչից և որոշյալ կամ հատկացյալ գոյականից կազմված բաղադրյալ տեղանունների և գոյականական հիմքով նրանց կրճատ կաղապարների զուգահեռ կիրառությունը՝ *Սևանա լիճ - Սևան, Արարատյան լեռնաշղթա - Արարատ, Կուրիլյան կղզիներ՝ Կուրիլներ, Մոսկվա գետ - Մոսկվա, Հանրապետության հրապարակ - Հրապարակ, Կենտրոն համայնք - Կենտրոն...* Թեև երբեմն կրճատման ժամանակ հատկացյալի փոխարեն հատկացուցիչն է պահպանվում, օրինակ՝ *Սոխակերաց վանքի* կրճատ տարբերակներն են *Սոխակերաց - Սոխկերի - Սոխկերո, Վարդերի գյուղը* դարձել է *Վարդերի* և այլն:

Գոյականն առավել ինքնակա խոսքի մաս է, քան ածականը, և գոյական անվանումներն ավելի հեշտ են գործառույց առանց բացահայտիչ եզրույթի, հատկապես եթե օբյեկտը բավականաչափ հանրահայտ է<sup>5</sup>: Այստեղ երևան է գալիս լեզվական տնտեսման սկզբունքը՝ ավելի կարճ ձևերին գերապատվություն տալու ձգտումը, թեկուզ և ի վնաս բովանդակային հստակության՝ *Հին Նորք - Նորք, Մոսկվա գետ - Մոսկվա, Նոր Օւլեան - Օւլեան, Նյու Ջերսի - Ջերսի...* անվանումները միանշանակ են միայն կոնկրետ

<sup>4</sup> Տե՛ս **А. В. Суперанская**, Типы и структура географических названий // Лингвистическая терминология и прикладная топонимика, М., 1964, էջ 59-65:

<sup>5</sup> Տե՛ս **Վ. Գ. Ջիհանյան**, Հայկական լեռնաշխարհի ջրանունները, «Հայոց լեզվի պատմություն», հ. 3, Եր., 1991, էջ 212-213:

խոսքային իրադրության մեջ, իսկ դրանից դուրս տարանշանակ են: Նորք բաղադրիչն առկա է նաև Նորքի տարբեր զանգվածներ նշանակող մանրատեղանուններում, իսկ *Մոսկվա* տեղանունն ամենից առաջ ըմբռնվում է իբրև քաղաքանուն, ապա միայն գետ: Այս երևույթը ևս կարելի է դիտարկել որպես լեզվական ընդհանրույթ, որովհետև հանդիպում է գրեթե բոլոր լեզուներում, անկախ տվյալ լեզվի բառակազմական հնարավորություններից: Գրեթե ամենուր միաբաղադրիչ տեղանունները դուրս են մղում բառակապակցություն տեղանուններին, որոնք, ինչպես նշեցինք, որպես կանոն երկանդամ են՝ ածական կամ սեռական հոլովով դրված գոյական որոշիչ և որոշյալ գոյական:

Վերը ներկայացված երկու դեպքերն էլ բնորոշ են ոչ միայն բանավոր խոսքին, այլև տեղանունների գրավոր գրքային կիրառություններին: Բանավոր - կենցաղային խոսքը գնում է առավել առաջ, ծագում են արդեն ոչ թե կրճատ, այլ գերկրճատ ձևեր, օրինակ՝ *Ամերիկայի Միացյալ Նահանգները* դառնում է *Միացյալ Նահանգներ*, իսկ ապա՝ *Նահանգներ* կամ *Ամերիկա*, *Լոս- Անջելեսը*՝ *Լոս*, *Սան Ֆրանցիսկոն*՝ *Ֆրիսկո*, *Սանկտ Պետերբուրգը* - *Պիտեր*: Այսպիսի ձևերը կիրառվում են նաև գեղարվեստական ոճերում, օրինակ՝ *եղել են Նահանգներում՝ Լոսում*, *Պիտերն անպատմելի քաղաք է...* Նման գերկրճատման արդյունք տեղանունները՝ *Ամերիկա*, *Նահանգներ*, *Լոս*, *Ֆրիսկո*, *Պիտեր*... այժմ գործածվում են բոլոր լեզուներում՝ քարգմանական կաղապարով: Նույնը նախկին *ԽՍՀՄ*-ի դեպքում, որից պահպանվում էր դարձյալ միայն վերջին բաղադրիչը՝ *Միություն*: Այսօր *Ռուսաստանի Դաշնություն*-ից պահպանվում է կամ միայն վերջին *Դաշնությունը*, կամ առավել հաճախ՝ *Ռուսաստանը*, նույնը՝ *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն* - *Լեռնային Ղարաբաղ*, ապա ավելի ընդհանրական՝ *Ղարաբաղ* կամ *Արցախ*... Նման գերկրճատված, հատված ձևերը նմանապես ընկալվում են որպես լեզվական տնտեսման, խնայողականության արդյունք, բայց երբեմն նաև դրանք կրում են հեղինակի, խոսողի զգացմունքային, ջերմ վերաբերմունքի կնիքը դեպի այդ երկիրը, քաղաքը կամ փողոցը, որը հիշատակվում կամ վկայակոչվում է: «*Իմ Ղարաբաղը*» ձևակերպումն արտահայտում է հուզական մեծ լիցք՝ ի հակակշիռ հնարավոր «*Իմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն*» արտահայտության, կամ օտար տեղանուններից՝ *մեր հայկական Լոսը*՝ ի հակակշիռ, *Լոս-Անջելեսի*, *երազանքների Ռիոն*-ն ի տարբերություն պաշտոնական *Ռիո դը Շանեյրոյի*: Երկանդամ կամ եռանդամ տեղանունների առաջին բաղադրիչները հաճախ ընկնում են, որոշ վանկեր սղվում, հնչյունափոխվում կամ միաձուլվում՝ *Արեգակ Սուրբ Նշան* - *Սուրբ Նշան* - *Նշան (վանք)*, *Բութա Սուրբ Աստվածածին* - *Բութի (վանք)*, *Արեգի Թաղ* - *Արեգի (գյուղ)*, *Գառնակերի Ջուր* - *Գառնակեր (գետ)*, *Սպիտակ եկեղեցի* - *Սպիտակաեղցի*, *Լաս Վեգաս* - *Վեգաս*, *Սան Ֆրանցիսկո* - *Ֆրիսկո*, կամ *Սանկտ Պետերբուրգ* - *Պետերբուրգ* - *Պիտեր*, *Արխիպո-Օսիպովկա* - *Արխիպկա*, *Նովյի Աֆոն* - *Աֆոն*... այս ձևերն իհարկե տարածքային առումով սահմանափակում ունեն, դուրս են պաշտոնական ոճերից<sup>6</sup>:

<sup>6</sup> Տե՛ս **И. П. Литвин**, նշվ. աշխ., էջ 19-14:

Անդրադառնանք շրջակա աշխարհի միավորների հանդեպ հասարակության վերաբերմունքի դրսևորման մեկ այլ հետաքրքիր ձևի, որը կրկին դրսևորվում է անունների միջոցով: Խոսքը յուրօրինակ մի փոխանունության երևույթի մասին է, երբ բուն տեղանվան փոխարեն կիրառվում են այլ բառով, բառակապակցությամբ արտահայտված հոմանիշ անվանումներ, յուրօրինակ այլասացություններ՝ *Ծագող Արևի երկիր՝ Ճապոնիա, Մշուշապատ Ալբիոն՝ Անգլիա, Արջերի երկիր՝ Ռուսաստան, Քարերի երկիր, Լեռների երկիր՝ Հայաստան, Արծիվների ուտան՝ Սյունիք* կամ *Ղարաբաղ* և այլն: Այս պարագայում նկատելի է նման տեղանվանաձևերի գուտ տեղական, սահմանափակ կիրառության ընդլայնում, ընդիուպ մինչև միջազգայնացումը, այդ ձևերն աստիճանաբար դառնում են համագործածական և հանրահայտ: Դրա հաստատումը վերը բերված երկու տեղանուններն են, որոնք թարգմանական գրականության միջոցով թափանցել են բոլոր լեզուների բառապաշար և հասկանալի են միջինից բարձր կրթական ցեղ կամ ինտելեկտ ունեցող մարդուն:

Վերը բերեցինք զգայական վերաբերմունքի կնիք կրող տեղանունների տարբերակների մի տիպ, որտեղ հասարակ գոյականը վերածվում էր իրադրային հատուկ անվան: Մանրամասներն այս երևույթը. *Երևան* տեղանվան փոխարեն կիրառվում է *Քաղաք* եզրը, *Արաքս* գետի փոխարեն՝ *Գետ*, *Նորքի զանգվածի* փոխարեն՝ *Չանգված*, *Ազատության հրապարակի* փոխարեն՝ *Հրապարակ*, *Մաշտոցի պողոտայի* փոխարեն՝ *Պողոտա...* Համապատասխան խոսքային իրադրության մեջ գտնվողի համար հասկանալի է, թե որ քաղաքի, գետի, հրապարակի, զանգվածի, պողոտայի մասին է խոսքը, մյուս բաղադրիչների հարկը չկա: Այսպիսի դեպքերում հասարակ գոյականը գրվում է մեծատառ՝ վառ դարձնելով հասարակ անուններից հատուկ անունների առաջացման հավերժական մեխանիզմը:

Տեղանվան տարբերակային ձևերից որևէ մեկի ընտրությունը երբեմն կարող է պայմանավորված լինել մակ արտալեզվական այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ ազգային պատկանելությունը, քաղաքական հայացքները, այսինքն՝ կրել միտումնավորություն: Այսպես՝ աղբրեջանական պաշտոնական գրագրության մեջ, մամուլում Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքը՝ *Ստեփանակերտը*, համառ հետևողականությամբ կոչվում է *Խանրենդի*, *Շուշի* քաղաքը՝ *Շուշա...* Մեր իրականության մեջ հայկական բնակավայրերի հետագայում առաջացած թուրքական անվանումները նույն հետևողականությամբ փոխարինվում են կամ իրենց բուն հայկական սկզբնաձևերով, որոնց որոնումները մեզ երբեմն տանում են դեպի պատմության խորքերը, վաղնջական գրավոր աղբյուրներն ու վավերագրերը, ինչպես արցախյան հակամարտության ժամանակ ազատագրված տարածքների տեղանունների դեպքում՝ *Քելբաջար - Քարվանդառ, Լաչին - Քաշաթաղ, Չանգելան - Կոփսական...*, կամ լիովին նոր անուններով, ինչպես օրինակ՝ *Ուլաշի - Վարդարաց, Գյուլարբու - Վազգենաշեն, Շարիֆա - Հակոբ Հակոբյան, Խանարաղ - Ոսկեվազ, Ղշաղ - Ծաղկաշատ...* Այս երևույթը հատկապես սրությամբ է դրսևորվում քարտեզների կազմության և տպագրության ժամանակ. Աղբրեջանը յուրօրինակ «քարտեզային պատերազմ» է հայտարարել Հայաստանին և Արցախին, որին միացել է Աղբրեջանի հավատարիմ դաշնակից Թուրքիան: Անգլերեն, ռուսերեն և բոլոր հայտնի այլ լեզուներով

քարտեզներ են տպագրվում ու տարածվում ողջ աշխարհով, որտեղ Հարավային Կովկասի և հարակից շրջանների հայկական բոլոր տեղանունները փոխարինված են թուրքական տարբերակներով: Փորձ է կատարվում միջազգային հանրությանը ապակողմնորոշել, նախատրամադրել դեպի իրենց նաև լեզվական մակարդակում՝ տեղանունների միջոցով: Այս տեղանվանական «հոմանշությունը» անկասելիորեն մուտք է գործում միջազգային դիվանագիտություն, քաղաքական բառապաշար. աղբրեջանամետ քաղաքական կողմնորոշում ունեցող գործիչներն արցախյան հակամարտության մասին տարբեր ամբիոններից՝ ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, Իսլամական կոնֆերանս..., հայտարարություններ կատարելիս օգտագործում են աղբրեջանաթուրքական տեղանվանական տարբերակները, իսկ առավել հայամետ գործիչները՝ պատմական կամ հայկական: Հավասարակշռված երևալու միտումը հանգեցնում է մեկ փաստաթղթում նույն վայրի երկու անունների կողք կողքի արձանագրմանը՝ *Ստեփանակերտ - Խանքենդի, Գետաշեն - Չայքենդ, Գանձակ - Գյանջա...* Նման երևույթ առկա է նաև արխազական, օսեթական կամ Պրեդնեստրովյեի հակամարտությունների պարագայում, որտեղ ևս տեղանունների արխազական, ալանական, մոլդովական տարբերակները սկսում են փոխարինվել կամ համատեղվել ռուսական, վրացական զուգաձևություններով՝ ըստ քաղաքական և բնավ ոչ լեզվական անհրաժեշտության:

Տեղանունների նման զուգաձևությունն աստիճանաբար ներթափանցում է նաև պատմագիտության մեջ, որը դառնում է քաղաքական-լեզվական կոնյունկտուրային ենթակա բնագավառ: Գերմանացու համար *Քյոնիգսբերգ* տեղանունն առավել հոգեհարազատ է, քան գործող *Կալինինգրադ*, որը Գերմանիայի պարտության և տարածքի կորստյան ցուցիչ է: Տեղանունները կարող են արտահայտել ոչ միայն ազգային, այլև վերազգային գաղափարական համակրանքներ, օրինակ՝ համայնավարական գաղափարախոսության դավանորդների համար *Լենինական, Լենինգրադ, Լենինաբադ...* տեղանունները շատ ավելի հարազատ են, քան դրանց ներկայիս պաշտոնական տարբերակները՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից կամ բնակության վայրից: Այսպիսով, տեղանունների զուգաձևություններից որևէ մեկին տրվող նախապատվությունը կարող է բացահայտել խոսողի ազգային-քաղաքական կողմնորոշումը, պայմանավորված լինել արտալեզվական հանգամանքներով, որոնք տեղանունների փոփոխության պարագայում երբեմն ավելի ազդեցիկ են, քան զուտ լեզվական գործոնները:

Կենդանի խոսքում, հաղորդակցության մեջ տեղանունների կիրառության ուսումնասիրությունը երևան է բերում դրանց փոփոխությունների բազմաշերտությունը և ընդհանրականությունը: Ուշագրավն այս դեպքում տարբեր լեզուներում առկա նույնատիպ երևույթների արձանագրումն է, ինչը գիտական վերլուծության շրջանակներում հնարավորություն է տալիս նախ՝ անդրադառնալ և բացահայտել տեղանվանական ընդհանրությունները, տվյալ երևույթի տիպաբանությունը տեղանվանական տարբեր համակարգերում, ապա՝ վերահաստատել մի ճշմարտություն՝ հաղորդակցության բոլոր ոլորտներում տեղանունների բացարձակ կանոնակարգումն ինքնին անհնար է, դա ընդամենը հնարավոր է միայն առանձին պետության պաշ-

տոնական գրագրության մեջ: Կենդանի խոսքը, անմիջական հաղորդակցությունը չեն կարող հրաժարվել տեղանունների հոմանշային, անգամ այլաբանական ձևերից, դրանք առավել հարուստ են դարձնում լեզուն և նշանային համակարգն ամբողջությամբ: Տեղանուններն աստիճանաբար իրենց զուգաձևությունների շնորհիվ պարզ նշաններից վերածվում են ոճական հարուստ բովանդակությամբ միավորների՝ հանրալեզվաբանության և հոգելեզվաբանության տեսանկյունից լուրջ վերլուծության ենթակա<sup>7</sup>: Տեղանվանագիտությունը հայտնվել է լեզվաբանական այս գիտակարգերի հատույթում: Անցած դարի 70-ական թվականներին արդեն, իբրև նոր, ինքնուրույն ուղղություն, ձևավորվել էր հանրատեղանվանագիտությունը, որը համալիր ուսումնասիրում և բնութագրում է տեղանունների գործառությունը հանրային կյանքում՝ բացահայտելով տեղանվան սոցիալական գործառության աստիճանը լեզվական և հասարակական գործոնների հետ տարժամանակյա և համաժամանակյա կտրվածքով տարբեր լեզուներում: Հայկական տեղանուններն այս հայեցակետից հետազոտության ենթակա բազմաշերտ նյութ են:

**Н. А. ДИЛБАРЯН** – *Языковые и внеязыковые основы усечения и Вариантности топонимов.* – Исследование топонимов в живой речи, в процессе непосредственной коммуникации открывает многообразие форм их изменений. Здесь особенно важна фиксация однотипных изменений топонимов в разных языках, что позволяет в рамках научного анализа выявить типологию данного явления в различных топонимических системах и, самое главное, – топонимические универсалии. Это приводит к выводу, что абсолютная нормализация и стандартизация топонимов во всех сферах коммуникации невозможны. Это возможно лишь в официальной лексике отдельно взятого государства. Живая речь не может отказаться от синонимических, даже метафорических форм одного и того же топонима. Вариантность топонимов делает богаче язык и знаковую систему в целом. Топонимы в силу их вариантности постепенно из простых знаков превращаются в стилистически окрашенные единицы, представляющие интерес и для социолингвистики, и для психолингвистики.

<sup>7</sup> Այդ մասին տե՛ս **В. Д. Бондалетов**, *Ономастика и социолингвистика // Антропонимика, М., 1970, էջ 23:*